Պարույր Սևակ

Երկմտելով հաստատում եմ

- «Լինե՞լ-չլինե՞լ,- այս է խնդիրը»...
Եթե վառվում է մորըդ թոնդիրը,
Հայրենի ծուխը երդից փնչում է,
Էլ ի՞նչ խնդիր է.
Ուրեմըն՝ լինե՛լ:
Թե տապալվում է չար հարձակումը,
Թե անխուսափ է ծլարձակումը,
Թե հարկավոր է նոր աղաց շինել,
Ուրեմըն՝ լինե՛լ:
Եթե բազմազան,
Թեկուզև դաժան
Գազաններն անգամ մնում են գազան,
Ոչ թե օրեցօր դառնում ընտանի.
Եթե վերստին աղջիկ - պատանի
Ի՛նչ էլ որ լինի՝ սիրահարվում են,
Իրար ձեռք բռնում, իրար փարվում են,
Կազմում ընտանիք.
Եթե մայրական կաթից ուռչում են
Նորահարսների կանգուն ծոցերը,
Եվ կենդանության կայտառ բոցերը
Ու կյանքի ծուխը նորից փնչում են,-

Էլ ինչո՞ւ ինչ-որ խնդիր հորինել,
Նախորոշված է երբ նախընտիրը:
Ի՜նչ էլ որ լինի՝ անպատճառ լինե՛լ,-
Եթե խնդիր կա՝ այս է խնդիրը...

28.V.1957թ. 26.XI.1957թ.
Մոսկվա